ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» հոկտեմբերի 2021 թվականի N: 313-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N: 26-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի փետրվարի 4-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու, աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 20-ի N:4 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N: 26-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման 1-ին կետով ստեղծված աշխատանքային խմբի կազմում Պողոս Աբրահամյանի փոխարեն ընդգրկել Հովհաննես Զոհրաբյանին:

2) Այդ կապակցությամբ Որոշման N: 1 հավելվածում «Պողոս Աբրահամյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ,» բառերը փոխարինել «Հովհաննես Զոհրաբյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար,» բառերով:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է